№ 170 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10 **1904** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10 № 170

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻՖՈՐ ՁՐԹՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ". Կամ Tiflis, Rédaction „Mschak". Տ է լ է ֆ օ ն № 253.

Ժամագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է լ է ֆ օ ն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պօրտ-Արտուրի պաշարումը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խօլերայի դէմ. Նաժակ Շամախուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐԻ ՊԱՇՊԱՐՈՒՄԸ

Ընդհանուրի ուշադրութիւնը այս օրերս ուղղված կը լինի դէպի Պօրտ-Արտուր։

Հեռագիրներից յայտնի է, որ պաշարումը արտաքին դիրքերից անցել է քաղաքի շրջագծին։

Պօրտ-Արտուրի պաշտպանութեան ներկայ գլխաւոր գիծը, „H. B."-ի ասելով, այն առաւելութիւնն ունի, որ նա լինելով աւելի ուժեղ, աւելի լաւ էլ կարող է դիմանալ ռմբակոծութեան, քան առաջաւոր դիրքերը։ Եւ ահա լինում։ Ներքին գիծը իր բազմաթիւ դիրքերով կառուցվել է ոչ թէ մի քանի օրվայ կամ շաբաթվայ մէջ, ինչպէս արտաքին դիրքերը, այլ ամիսների և տարիների ընթացքում։

Սակայն ներքին դիրքերը շատ են մօտ քաղաքի շինութիւններին, նաւահանգստին և նաւաշինարաններին։ Այդ դիրքերը (տես „P. B."), որոնք 4—5 վերստ հեռաւորութեան վրա են գտնվում, անցնում են Ոսկեսարից Դրակօնեան և Սեդանեան սարերով։

Այժմ, երբ պաշարված գիծը հասել է քաղաքի սահմաններին, օրերի հրամանատարութիւնը անցել է բերդի կոմենդանտ Սմիրնովի ձեռքը (իսկ մինչև այդ գիծը գտնվում է Ստեսսելի ձեռքում)։

Մենք յայտնել էինք, որ եապօնացիները տիրել են Գայլեան և Կանաչ սարերին։ Եապօնացիները մի շաբաթ ժամանակ գործ դրին, մինչև որ այդ սարերի վրա բարձրացրին և հաստատեցին պաշարողական մեծ թնդանօթներ։ Սկսած յուլիսի 25-ից՝ Պօրտ-Արտուրը ենթարկված է անընդհատ և աստիճ ռմբակոծութեան։

Եապօնացիները նախ ռմբակոծեցին արեւելեան մարակոցները—Ոսկի սարի վրա (Ոսկեսարից 5 վերստ հեռու, ծովափի մօտ) և Դագուշանի ամրութիւնները, որոնք գտնվում են Դրակօնեան լեռների կենտրօնում։ Այդ ամրութիւնները գրանվում են Պօրտ-Արտուրի պաշտպանութեան գլխաւոր գծի վրա։ Ամբողջ 15 ժամ ռմբակոծելուց յետոյ, եապօնական հեռանկ զօրքը գրաւեց յուլիսի 27-ին այդ բարձրութիւնները։ Սակայն հետեւեալ օրվայ ընթացքում եապօնացիները նոր գրաւումներ չը կատարեցին և յետ մղվեցին։ Իսկ այժմ, ինչպէս հաղորդում է Բէյտէրի գործակալութիւնը, սկսվել է Պօրտ-Արտուրի ընդհանուր շտուրմը բոլոր տեղերից։

Բերլինի լրագիրների հեռագիրները ցոյց են տալիս, որ եապօնացիները գլխաւոր գծի վրա վերցրել են գարձեալ մի մարտկոց հիւսիսային մասում, այն է Շէնցգետաուն կոչված տեղում, որ երկաթուղային գծի մօտ է, քաղաքից վեց վերստ, իսկ Գայլեան սարերից երկու վերստ հեռու։

Եթէ այդ վերջին տեղեկութիւնը ճիշդ է, դա նշանակում է, որ եապօնացիների ձեռքում գտնվում են գլխաւոր պաշտպանողական գծի վրա երեք մարտկոց, այն է—հիւսիսում Շէնցգետաուն, արեւելքում Դագուշան, իսկ ծովի ափին Սեաօգուշան։

Պօրտ-Արտուրի պրուժինը, անկասկած, գարձել է շատ լուրջ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԽՕԼԵՐԱՅԻ ԳԷՄ

Մենք տեսանք, որ արեւելքում սիրում է ֆատալիզմը և որ դրանից առաջանում են բազմաթիւ կորստաբեր հետեւանքներ։

Մենք նկատեցինք, որ միայն մահմեդականները չեն համակված այդ հակատագրական հասկացողութիւններով, այլ և Կովկասի բոլոր ազգաբնակութիւնը, Ռուսաստանի հարաւն ու արեւելքը։

1892—93 թւի խօլերայի ժամանակ Կարս, Ալէքսանդրօպօլ, Կաղզուան, Երևան և այլ հայարնակ քաղաքներ էլ անագին զոհեր տուին։ Այդ տեղերում ևս թագաւորում էր բժշկին չը դիմելու, հիւանդին թագցնելու ոճրագործ սովորութիւնը։

Կաղզուանում գաւառական ռուս բժիշկը տեղական ժողովրդի համար դասախօսութիւն կարդաց խօլերայի դէմ (1892 թւի աշնանը)։ Բոլորը հայեր էին, թիւրքի լծից հազիւ 14 տարի առաջ ազատված.—ոչ մի բառ ռուսերէն չէին հասկանում։ Մի երիտասարդ թարգմանում էր բժշկի ասածները... ծուռ ու սխալ, որովհետև թարգմանն էլ ոչ լաւ ռուսերէն գիտէր, ոչ էլ լաւ հայերէն։ Ժողովրդին հնար եղաւ հասկացնել, որ պէտք է մաքրութիւն, որ պէտք է դիմել բժշկի և այլն, բայց երբէք, ոչ մի հնար չեղաւ հաւատացնելու, որ բժիշկները խօլերայով հիւանդին չեն «դեղում»։

«Դեղում են, թունաւորում»... «կենդանի կենդանի թաղում»։

Ո՞րտեղից է ծնել այդ հրէշաւոր համոզումը ժողովրդի գլխում։

Ահա այդ հարցին պատասխանում է տաղանդաւոր ռուս հրապարակախօս Դօրօշևիչը „P. Л." լրագրում։

—

Չը պէտք է վախեցնել ամբոխին։ Նա տգէտ է, խաւար։ Իսկ նրա առողջութեան վրա հսկողները յաճախ մոռանում են այդ բանը։

1892—93-ի խօլերայի ժամանակ Աստրախանում ահագին ընդհարում եղաւ. հոսեց մարդկային արիւնը։ Պատճառն այն էր, որ վախեցրել էին ամբոխին։

Աստրախանի քաղաքային դուման մի տարօրինակ գիւտ էր արել։ Նա շինել էր աուել առանձին տեսակի «խօլերայի կառքեր՝ դիակառքի ձևով ու տեսքով»։

Ի՞րանց մէջ էին կոխում հիւանդներին ու քշում հիւանդանոց։

Նոյն տեսակի կառքերով էլ տանում էին թաղելու մեռելներին։

Մահը սարսափելի է ամրոխ համար. բայց նա աւելի ևս զարհուրեցնում է տգէտ ամբոխին։ Մեծ հաճախարակների ժամանակ, երբ բանաստեղծի խօսքով՝ «մահի սև հրեշտակը սաւառնում է երկրի վրա»—միշտ զրգռված է լինում ամբոխի երևակայութիւնը. սարսափի ճիրաններում տեղված է լինում նրա հոգին։

Եւ յանկարծ—անից դուրս են հանում իր ազգականին, իր սիրելուն... նա դեռ կենդանի է... բայց նրան կոխում են այդ «խօլերայի արկղը», այդ դիակառքը...

Ոչ, ոչ. նա թոյլ չի տայ իր սիրելուն կենդանի-կենդանի իջեցնել հողի տակը... և այն էլ կիր ածել վրան, այրել... օ, դա զարհուրելի է նրա համար։

Եւ յարձակվում է ամբոխն այդ «դաւաճան կառքերի» ու նրանց հեղինակ բժիշկների վրա...

Այո, այդպէս եղաւ Աստրախանում։

Յարիցինի դուման աւելի ևս մեծ յիմարութիւն արեց այն ժամանակ։ Նա պատրաստել տուեց երկաթէ եղանները... հիւանդներին երկաթէ եղաններով պէտք է բռնէին «դիակառքի նման արկղները» խոթէին...

Նիժնի-Նովգորդի դուման մի ուրիշ այլանդակ ձևի կառք հնարեց, բայց այն ժամանակի նահանգապետ Ն. Մ. Բարանովը դիմադրեց նրա գործածութեանը. «չեմ թոյլ տայ, որ ժողովրդին վախեցնէք այդ զզուելի դիակառքերով»։

Ահա մի շարք դրանց նման պատճառներ զարհուրեցնում են ամբոխին և ծնեցնում «կենդանի մարդուն թաղելու» հրէշաւոր գաղափարը...

—

Բայց դուք կը պատահէք շատ աղնիւ ու պատուաւոր մարդկանց, որոնք կերդվեն ձեզ, որ իրանց աչքովը են տեսել խօլերայի ժամանակ կենդանի մարդուն թաղելիս։

Ահա այդ երևոյթին տալիս է Դարաշևիչը հետեւեալ բացատրութիւնը։

Խօլերայից մեռնողի շունչը կտրվում է, սիրտը դադարում խփելուց։ Դա նշանակում է, որ նա արդեն մեռել է։ Բայց նրա մարմնի տաքութիւնը դեռ բաւական ժամանակ չէ սառչում. դեռ նա չէ դիականում. նրա մազերը փափուկ են մնում՝—կարծես դեռ կենդանի լինի։ Այդ վիճակում նա դեռ ցնցուղներ, չղաձգութիւններ է անում։

Բժիշկն ընդունում է դրան մեռած։ Այո, նա մեռած է։ Եւ նրան իսկոյն թաղել է տալիս։

Իսկ ամբոխը, իսկ հասարակ մահկանացուները նրան դեռ կենդանի են համարում։

Ահա սոսկալի համոզմունքի արմատը... է հարկէ, Դարաշևիչի ասելով։

Այդպիսի դէպքում պարտք է դրվում բժիշկների վրա չափազանց զգոյշ լինել։

Խօլերան վարակում է բերանից ներս մտնող բացիլներով։ Ի՞նչ ձևով, որ մեռածը մի քանի ժամ աւել մնայ երկրիս վրա—մինչև որ խակացէս դիակ դառնայ, սառչի, այլ ևս ոչ մի կասկած չը լինի։

Եւ այն ժամանակ միայն սառած դիակը տարէք, իջեցրէք մայր-հողի գիրկը, պատանով ծածկեցէք ու յետոյ միայն կիրը վրան լցրէք...

Տխուր է մահը, սարսռեցնող։

Բայց նա աւելի ևս տխուր ու զարհուրեցնող է մութ, խաւար ամբոխի համար։

Ժաժակ

## ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Յուլիսի 28-ին

Ինչպէս ուրիշ քաղաքներում, նոյնպէս և մեզ մօտ միջոցներ են ձեռք առնված խօլերայի դէմ կռվելու համար։ Սակայն չը նայելով ձեռք առած միջոցներին և 1892 թւին փորձրիկ բրօշիւրներով յատուկ Շամախու համար հրատարակած պարտաւորիչ կանոններին, դարձեալ նահապետականութիւնն է թագաւորում մեզանում...

Սանիտարական ժամնաժողովը եկաւ, արձանագրութիւններ կազմեց, ահագին տուգանքների ենթարկվեցին անմաքրութեան հեղինակները, բայց... դարձեալ նոյն երգն է երգվում, նոյն պարն է շարունակվում... դարձեալ կեղտոտութիւնն է աչքի ընկնողը ամէն տեղ։ Ինչ անէ իշխանութիւնը, երբ ժողովուրդը ինքը գաղափար չունի առողջապահութեան մասին ու ծաղրելով է արտասանում մաքրութիւն բառը։

Ինչպէս լսում ենք, մեր քաղաքացիները մի խնդրագիր են կազմել, որը շուտով կը ներկայացվի պ. գաւառապետին։ Դրանով քաղաքացիները խնդրում են պ. գաւառապետից, որ եթէ հնար է արգելվի գոնէ ամառվայ երեք ամիսներում կառքերի անց ու դարձը «կրասնի» կոչված փողոցով, որ երկրաշարժից յետոյ մեր միակ զբօսատեղին է դարձած։ կառքերը այդ փողոցից անցնելով, յաճախ նեղ դրութեան մէջ են դնում զբօսնող հասարակութեան, մանաւանդ երեխաներով զբօսնող կանանց, որովհետև մեր քաղաքի կառքերը եռաձի և քառաձի են լինում։

2) Թոյլ տրվի իրանց Ղալա կոչված (այժմ պինւորական) աղբիւրի ջուրը, որ անընդատակ կօրչում է, բերել յիշեալ «Կրասնի» փողոցը, որ շատ յարմար կը լինէր թէ փողոցը ջրելու և թէ նոր ծառեր աճեցնելու համար։

Այդ խնդրագրի նպատակը միանգամայն գովելի է և մեզ մնում է աջողութիւն բարեմաղթել՝ իրագործելու այդ հրաշալի միտքը։ Լաւ չէր լինի արդեօք, որ այդ յարգելի պարոնները իրանց խնդրի մի կէտն էլ գարձնէին փողոցների մայթերը. խնդրէին պ. գաւառապետին, որ նա պատուիրէր տներին, իրանց տների սահմանը մայթերին թէկուզ հասարակ քարերով։

Ջաֆֆար

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անդրկովկասի երկաթուղիների վարչութիւնը, աչքի առաջ ունենալով, որ կայարաններում եղած ջուր եռացնելու կաթսաները բաւականութիւն չեն կարող տալ դրված նպատակին, խնդրել է երկաթուղիների կենտրօնական վարչութեանը 15,000 ր. յատկացնել, որպէս զի մի քանի կայարանների առաջ շինվեն եփած ջուրը սառուցով պաղեցնելու համար մեծ ամաններ կամ չաներ։

—

Մեզ հաղորդում են, որ մտադրութիւն կայ Թիֆլիսում դումարել «Մարիամ Մագտաղինացու ապաստարանի» հիմնադիր անդամների ընդհանուր ժողով։ Այդ նոր ընկերութեան կանոնադրութիւնն արդէն հաստատված է։ Մտադրութիւն կայ սեպտեմբերին կայանալիք հիմնադիրների ժողովում ընտրել նոր ընկերութեան վարչական մարմինը։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում մտադրութիւն կայ հիմնելու կանանց համար տեխնիկական կուրսեր։ Այդ կուրսերում պէտք է ընդունվեն առնուազը 18 տարեկան կանայք, միջնակարգ կրթութիւն ստացած։

—

Մենք ստացանք Գնունի—Մարիամ Փոտոտոպիայի մի նոր գեղարուեստական գործը, այն է «Շքեղ գեղարուեստական ալբոմի» չորրորդ պրակը, որ պարունակում է իր մէջ հայկական հին յիշատակարանների 13 կտորներ, այն է՝ Տեղերի վանքը, Յովհաննավանքը, Սանահնի վանքը, Հաղբատի վանքը և Անիի աւերակներից 9 տեսարան։ Գործը կատարված է մեծ խնամքով, գեղարուեստականօրէն և գինը նըշանակված է էժան, ընդամենը 1 րուբլի։ Յորհուրդ կը տայինք հայ հասարակութեան ձեռք բերել այդ ալբոմը, իբրև սեղանի զարդ։ Միակ պակասութիւնը, որ մենք պարտք ենք համարում արձանագրել, այդ այն է, որ ալբոմի շապիկը, որի հրատարակիչները կամեցել են դեկադենտական տեսք տալ, այնքան ապշող չէ դուրս եկել և ոչ մի հայ ընթերցող չէ կարող այն զանազան «դեկադենտական» նշաններից եզրակացնել, թէ տպված բառերը պէտք է կարդալ «Շքեղ ալբօմ գեղարուեստական, Դ. պրակ»։

—

Բագուի նահանգապետը հեռագիր է ստացել սենատօր Դուրնովոյից (առ այժմ ներքին գործերի մինիստրի պաշտօնավարը), որ ինքն ամենահպատակ զեկուցագիր է ներկայացրել Նորին Կայսերական Մեծութեան խօլերայի ընթացքի մասին Պարսկաստանում և այն միջոցների մասին, որ ձեռնարկվել են նրա մուտքը մեր կայսրութեան սահմաններն արգելելու համար։ Նորին Մեծութիւնն այդ ամենահպատակ զեկուցագրի վրա բարեհաճել է գրել. «Պէտք է ամեն հնարաւոր միջոց գործադրել, որպես զի արգելվի խօլերայի մուտքը Ռուսաստան»։ Բագուի լրագիրները յայտնում են, որ մինիստրի տեղապահը խնդրում է Միապետի այդ կամքը յայտնել այն հաստատութիւններին, որոնց վրա է դրված սանիտարական միջոցները ձեռք առնելը և նրանց վրա հսկելը։

—

Մինչև Ասիական երկաթուղիների կառավարիչը խնդրել է երկաթուղիների ընդհանուր վարչութիւնից՝ ուղարկել 9 բժիշկ, ֆելդշերներ և առանձին գումար սանիտարական և ախտահանական միջոցների ձեռնարկելու հա-

մար, որովհետև Ֆօրասանում խօլերա է բռնացել։

—

Դօնհան շրջանի վեմամշօնները արդէն Պետերբուրգի փորձնական բժշկութեան ինստիտուտից հակախօլերային շիճուկ են բերել տուել։

—

Վարշաւայի լրագիրները լսել են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստերութիւնն սկզբունքով համաձայն է աճասաբուժական ինստիտուտներում կանանց ուսանելու խնդրին։ Մինիստերութեան ձէջ տիրող կարծիքն այն է, որ պէտք է թողնել նրանց մտնելու յիշեալ ինստիտուտները, միայն որոշ տոկոս և ոչ բոլորովին ազատ։ Կարճ ժամանակում պատրաստ է այդ հարցի պաշտօնական աշխատութիւնը։

—

Օգոստոսի 7-ին Բաթումում ահագին հրդեհ է պատահել. այրվել են Օգօրօդնիկօվի կտորեղէնների խանութը, Լուզվիկի ժամացոյցների, Ցվերխանօվի ամանեղէնների, ոսկերիչ Ֆեթֆիաճեանի և Օվեանցի կօնդիտէրական խանութները։ Բայի Օվեանցի և Ֆեթֆիաճեանի խանութներից, միւսներն ապահովագրված են եղել։

—

«Echo de Paris» լրագիրը հաղորդում է, որ Վ. Կ. Պլէվէին սպանողի ով լինելը հաստատված է և որ նրա գործակիցներից երկուսը ձերբակալված են։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ յանկարծ Բօսֆօրը զարձել է Թէյի տրանզիտի կէնտրօն։ Այժմ Մօսկվայի Թէյի մեծամեծ ֆիրմաների մի խոշոր մասն իր Թէյն առանում է Բօսֆօրի մաքսատնով։ Միայն մի առևտրական տուն 2,000,000 ր. մաքս է վճարել։ Այս օրերս սպասվում է մի նաւ 25,000 պուդ Թէյով՝ մէկ միլիօն րուբլի արժէքով։

—

1903 թվի ընթացքում միմիայն Անգլիական երկաթուղիների վրա նկատվել է 35,264 առանց տոմսակի ճամբորդ։ Հապա որքան կը լինեն չը նկատվածները։ Այդ երևոյթի աւելի և աւելի աճելն աչքի առաջ ունենալով, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնն առաջարկել է երկաթուղային վարչութիւններին՝ անտոմս ճամբորդներ նկատած ժամանակ դատական պատասխանատուութեան ենթարկել կօնդուկտօրների խմբերը։

—

Կիրակի, օգոստոսի 8-ին հայ-վրաց Թատրասէրների ընկերութիւնը Հալաբարի Արաքսեանի Թատրօնում խաղաց Գ. Սունդուկեանի «Խաթաբալա», կօմեդիա 4 գործողութեամբ։ Շատ ուրախալի է տեսնել, թէ ինչպէս երկու ազգութեան պատկանող սիրողները ձեռ ձեռքի տուած աշխատում են Թատրօնի բարգաւաճման և առաջադիմութեան համար։ Հայ Թատերասէրները շատ յաճախ վրաց բեմի վրա հանդէս են գալիս ամեն տեսակ դերերում և մեծ մասամբ արդարացնում իրանց վրա դրած յոյսերը։ Նոյնն անում են և վրացի Թատերասէրները։ Մենք սրտի գոհունակութեամբ ենք նայում, երբ հայ Թատերասէրները վրաց բեմի վրա խաղում են. նոյն զգացմունքն արտայայտում ենք նաև այն դէպքում, երբ վրացի Թատերասէրը հայ բեմի վրա Թիֆլիսի հայերէն բարբառով իր դերը կատարում է։ Դահլիճը լիքն էր հանդիսականներով. ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեց։ Բնորոշ էին իրանց դերերում պ. պ. Գուլազեանը, վաճառական Զամբախովի դերում, որը շատ լուրջ ու ժամածված խաղով հիացում պատճառեց հասարակութեան. Դուշչեանը և պ. Լաշքարեանը նոյնպէս՝ առաջինը Բայու դերում՝ իսկ երկրորդը ծառայ-Սարգսի դերում։ Կանանց այժերից աչքի էր ընկնում օր. Բէկլեանեանը, իր կենդանի խաղով, Ամփերու դերում։ Վատ չէր և օր. Բուչուկուրին։ Ընդհանրապէս անսոսրելը լաւ պահպանվեց։ Հատասարակութիւնը վարձատրեց սիրողներին բուռն ծափահարութիւններով՝ որոնց վերջ չը կար։ Մի քանի խօսք ևս. ցանկալի կը լիներ, որ հայ և վրաց Թատերասէրները, իրրև միասին գործող մի խումբ, առանց ազգային խարութեան, ձեռք ձեռքի տուած առաջ տանէին ժողովրդի սրաին մօտիկ այդ սուրբ գործը։ Քանի որ պ. Արաքսեանի Թատրօնը մօտ, մի և նոյն ժամանակ և իր դերով մատչելի է Հալաբարի հասարակ դասակարդին, խորհուրդ կը տայինք խմբի կառավարիչ պ. Նասիձէին, որ գոնէ նա առաջին առնէը այդ սխալը իրազութեան ու անկի չը տրվէը խմբի քայքայվելուն և Թատրօնատուրի անվէը Հալաբարի մտաւորապէս խաւար ժողովուրդը։ Մի նկատողութիւն. ինչքան էլ ծիծաղեցնող խօսքեր ասվեն բեմի վրա, այնու ամենայնիւ անվայել բան է, երբ ժողովրդի միջից ձայնակցում են դերասաններին և ծիծաղն էլ պէտք է առհասարակ. կան անձիքն, որոնք իրանց բարձր ծիծաղով խանգարում են հետևելու խաղին։ Վարագոյրը բարձրանում է, բայց անտանելի ազմուկը, գոռում-գոչումը չի պատգարում։

—

Ուսանող Մնացականեանը գրում է. «Յուլիսի 17-ին, Բերեսօվօ-Բօգօդուխովսկի ընկերութեան քարածխի հանքում պոնվից մի ահագին քարացած սողուն, որը իմ կարծիքով (հիմնվելով նրա մարմնի մի քանի մասերի վրա) ներկայացնում է Plesiesaedus կենդանու տիպը։ Ահա այդ հազարաւոր տարիներ սրանից առաջ ապրող կենդանու մարմնի մասերի մինիմալ չափը. գլխի լայնութիւնը—11 վերշոկ, երկարութիւնը—10 արշին, փորի լայնութիւնը, ամենահաստ մասը—1 արշին։ Այնքան մեծ է և ահագին տեղ է բռնում առատասրում, որ հազիւ թէ կարելի լինի ամբողջովին հանել։ Այդ սողունը ինչպէս երևք անգամ ոլորված. պահած է եղել, այնպէս էլ քարացել է։»

—

ՅՂՆԱՅԻՑ մեզ գրում են՝ «Մշակի» մէջ տպված էր Ցղնայից գրած մի լուր, որ խօսում էր բժշկի գների և ջրաբաշխութեան մասին։ Թղթակիցը բոլորովին սխալ կերպով կարծել է թէ Ցղնայի մէջ բժշկի գները աւելի սուր են, քան Օրդուբաթի և Նախիջևանի շուկաներում եղած գները, մինչդեռ իրականութեան մէջ բոլորովին հակառակ ենք տեսնում։ Ցղնայում բժշկը ծախվել է 15 ր., իսկ Օրդուբաթում 14 ր. 30 կ. և Նախիջևանում 13—14 րուբլի։ Ինչ վերաբերում է ջրաբաշխական վէճերին, պէտք է նկատել, որ այս տարի ջուրը առատ է և ոռոգին սուր վէճերի տեղիք չը կայ։»

—

ԿՈՂԲԻՑ մեզ գրում են. «Տեղիս ժողովուրդը վաղուց սպասում էր մեր գաւառի հաշտարար միջնորդին։ Յուլիսի 31-ին նա եկաւ այստեղ. իսկ հետևեալ օրը՝ օգոստոսի 9-ին տեղիս շինական դատարանում ժողովրդի խնդրն բազմութիւնը դիմեց նրան բանաւոր կերպով, որ այժմեան տանուտէրը հաշիւ նկերկայացնի։ Հաշտարար միջնորդը կարգադրեց, որ ընտրեն հաշուեհաններ։ Ժողովուրդը գրաւոր հատատակական վճիռով ընտրեց 7 հաշուեհաններ։ Վերջիններիս պարտականութիւնն է՝ քննել մեր ներկայ տանուտէրի հաշիւները սկսած 1903 թ. մինչև ներկայ տարվայ յուլիսի վերջը։ Ժողովուրդը վստահ է, որ հաշուեհանները անաչառ կերպով կը կատարեն իրանց պատասխանատու պարտականութիւնը»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Փոխարքայի մուտքը Վլադիվոստոկ։ Օգոստոսի 4-ին, ուսւոց կայսերական փոխարքայ Ծովապետ Ալէքսէևիը մուտք գործեց Վլադիվոստոկ։ Նրան դիմաւորեցին հրամանատարներ Սկրիդլովը, Լիհաչիչը և միւս իշխանութիւնները. նա ուղղակի գնաց տաճար, ուր մաղթանք կատարելուց յետոյ, գնաց նահանգապետական տունը, ուր պէտք է ապրէ։ Պատգամաւորութիւններն ընդունելուց յետոյ, փոխարքան այցելութիւններ տուեց իշխանաւոր անձանց, սկսելով Սկրիդլովից։ Երկրորդ օրը, տաճարում հոգևնանգիստ կատարվից սպասված ծովապետ Վիտգեֆտի յիշատակին, փոխարքայի, Սկրիդլովի և Լիհաչիչի ներկայութեամբ։

Յուլիսի 28-ի կուի մասին։ Իոկօհամից Լօնդօն ուղարկված հեռագիրներից երևում է, որ այդտեղ պաշտօնապէս դեռ չեն հրատարակված Պօրտ-Արտուրի ժօտ յուլիսի 28-ին տեղի ունեցած ծովային կուի մանրամասնութիւնները։ Տօկիօում թերեցնող ազդեցութիւն գործեց Պօրտ-Արտուրեան էսկադրայի դուրս գալու լուրը։ Այդտեղ ենթադրում են, որ նաւապետական նաւերը ուժերի բաւական պակաս չունէին։ Տօկիական լուրերին նայելով, որոնք սակայն դեռ հատատուութիւն չեն գտել ոչ մի կողմից, ուսւոց երեք ականանաւերը եապօնացիները գրաւել են չինական ծովափունքից ոչ հեռու (Бирж. Вѣд.)։

Ինչպես է կատարվում Պորտ-Արտուրի ռմբակոծումը։ Լօնդօնից հեռագրում են, որ լրագիրներում օգոստոսի 1-ին հետևեալ լուրն է տպված. «Պօրտ-Արտուրի հարուածումը հեւեալ կերպով է կատարվում. եապօնացիները 6 ժամվայ ընթացքում ռմբակոծում են առանձին ամրոցները, իսկ յետոյ 6 ժամ ռմբակոծութեան են ենթարկում քաղաքի ներքին մասերը։ Եապօնացիները գրաւել են Շօկօն ամրոցը, 6 վերստ դէպի հիւսիս Պօրտ-Արտուրից։

Նիւ-Ջժաւանից հեռագրում են «Daily Express» լրագրին. «Այստեղ եկան օժանդակ զօրքեր հիւսիսից, որպէս զի փոխարինեն Պօրտ-Արտուրը պաշարող եապօնական բանակի մէջ ընկածներին։ Ամեն օր շարունակվում են ծանր արտիլերիայի պատրաստութիւնները։ Կեղծ յարձակումներ գործում են եապօնացիները բոլոր ուղղութեամբ, որպէս զի բերդի պաշտպաններին ցրված պահեն մեծ տարածութեան վրա (Бирж. Вѣд.)։

Ռուսաց ոյժերի կենտրօնացումը Մուկդենում։ «Daily Mail» լրագրի սեփական թղթակիցը հեռագրում է Մուկդէնի շրջականերից, որ հետզհետէ նշանաւոր օժանդակիչ զօրքեր են հասնում ռուսաց բանակը և ռուսաց դիրքերը Մուկդէնում աւելի և աւելի ամրանում են։ Ռուսաց ոյժերը կենտրօնացած են Մուկդէնի մէջ։ Սինչհեանից սասցված տեղեկութիւնների համաձայն, ահագին օժանդակ զօրքեր են եկել։ Եապօնական բանակում—գրում է ապա թղթակիցը—զանազան հիւանդութիւններ են ճարակում։ Տրօպիքական տաքերը և տեզատարափ անձրևները առաջ են բերում մալարիա երկու բանակներում էլ։ «Daily Telegraph» լրագրի ասելով, եապօնական նաւատորմի Պօրտ-Արտուրի էսկադրայի վրա գործած վերջին յարձակման ժամանակ խորասուզվել են եապօնական 10 հակահականանաւեր (С. Вѣд.)։

Պատերազմող կողմերի նաւերի խնդիրը չեֆօօ նաւահանգիստներում։ Ռուսաց Պօրտ-Արտուրեան նաւատորմի մի քանի նաւերը, ինչպէս յայտնի է, ժամն զերմանական նաւահանգիստը։ Այդ առիթով «Local Anz.» թերթը նկատում է, որ Գերմանիան, անկասկած, կը պահպանէ ընդհանուր միջազգային իրաւունքը, որի համաձայն պատերազմող պետութեան նաւերը կարող են միայն չէզոք նաւահանգստում 24 ժամ, եթէ նրանք նաւարկելու ընդունակ չեն։ Բայց այդ դէպքում, երբ նաւերը ուսերեա ունեն, դրութիւնը փոխվում է։ Կայ մի դաշնագիր, կնքված Ամերիկայի, Գերմանիայի, Անգլիայի և Եապօնիայի մէջ, որի համաձայն չէզոք նաւահանգստի հրամանատարը, նահանգապետը և այլն ամերիան քննելով, որոշում է այն ժամանակավիճակը, որի ընթացքում նաւը կարող է կարկատվել և հակում է աշխատութիւնների ընթացքը արագացնելու վրա։ Երբ նաւը կարկատված է, նա պէտք է թողնէ նաւահանգիստը կամ պինդ մնալ լինի, ինչպէս և արդէն կարկատված նաւը, որ 24 ժամից աւելի է մնում։ Զինատախտ եղած նաւերը մնում են չէզոք պետութեան հովանաւորութեան ներքոյ մինչև պատերազմի վերջը։ Չէզոք նաւահանգստում չէ թոյլատրվում աշխատութիւնները կատարել նաև ռազմիկ ընդունակութիւնը լրացնելու կամ ռազմամթերք պատրաստելու համար։ (Нов.)

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Իտալական լրագիրները հաղորդում են, որ Նօրվէգիայի յայտնի դրող Բիօրնստեէրնէ Բիօրնսօնը իտալերէն լեզուով նորերս պրել է մի պրամա, որ շուտով կը ներկայացնեն Իտալիայում։ Դրամայի նիւթը վերցված է իտալական մի դերասանի կեանքից։

—Նորերս Գերմանիայի Հալլէ համալսարանական քաղաքում կայացաւ կոյրերի ուսուցիչների ընդհանուր ժողով։

—Ամերիկայի Միացեալ-Նահանգների և Թիւրքիայի մէջ վերջերս ծագած ընդհարումը, ինչպէս յայտնի է, վերջացաւ նրանով, որ Թիւրքիան պատրաստակամութիւն յայտնեց կատարել ամերիկական կառավարութեան բոլոր պահանջները և սա էլ, ստանալով այդ խոստումը, յետ կանչեց Զմիւռնիայից իր նաւերը։ Այժմ լրագիրները հաղորդում են, որ Ամերիկայի պահանջները հետևեալներն էին. ամենից առաջ Ամերիկան պահանջում էր վարձատրութիւն այն վնասների համար, որ ամերիկական հպատակները կրել էին հայկական խռովութիւնների և կոտորածների ժամանակ։ Սպա Միացեալ-Նահանգները պահանջում են պաշտօնապէս ճանաչել զանազան հաստատութիւններ—եկեղեցիներ, դպրոցներ, հիւանդանոցներ—որոնք հիմնել են ամերիկական քաղաղուչները, գլխաւորապէս Փոքր-Ասիայում։ Վերջապէս իրանք քարոզիչներն ևս կրկի են վնասներ խռովութիւնների ժամանակ և պահանջում են վարձատրութիւն։ Ինչ վերաբերում է վնասների հատուցման հարցին, պէտք է ասել, որ Բ. Դուռը միշտ սկզբունքով հերքել է, որ ինքը պարտաւոր չէ հատարում իրան մեծ պետութիւնների առաջ վարձատրութիւն տալ այդ կորուստների համար, թէև պետութիւնները վերջ ի վերջոյ ձեռք են բերել այդ վարձատրութիւնը։ Պահանջելով որ ամերիկական քարոզիչների հիմնած բազմաթիւ հատատատութիւնները ճանաչվեն, ամերիկացիները շահում են եւրոպական պետութիւնների օրինակի վրա, մանաւանդ Ֆրանսիացիների, որոնք իրանց ծովային ցոյցով 1902 թ. Մխիթիւնի առաջ մղուեցին տուեցին պէ-պէօմատիական քայլերին, որոնց հետևանքն այն եղաւ, որ Թիւրքիայում առանձին պետութիւնների հովանաւորութեան ներքոյ և յաճախ առանց Թիւրքական իշխանութիւնների օրինական Թոյլատրութեան—հիմնված դպրոցները, եկեղեցիները և հիւանդանոցները ճանաչվեցին իբրև օրինապէս գոյութիւն ունեցող հատատութիւններ։ Բայց հենց այդ կէտում Բ. Դուռը անվիջող հանդիսացաւ ամերիկացիների վերաբերմամբ, որովհետև նա նայում է Անատոլիայի նրանց հատատութիւնների վրա, իբրև հայկական շարժման օգնողների վրա։ Վերջապէս Միացեալ-Նահանգները ցանկութիւն են յայտնում, որ իրանց պէ-պէօմատիկան ներկայացուցիչը Կ. Պօլսում, ինչպէս և Թիւրքիայի ներկայացուցիչը Վաշինգտօնում մեծ դեսպանների շարքը դասվին, որպէս զի այդպիսով եւրոպական մեծ պետութիւնների հետ մի աստիճանի վրա կանգնած լինեն։

—Անգլիական արտաքին գործերի մինիստրը հաղորդել է, ինչպէս ասում է Տայմս գործակալութիւնը, անգլօ-հայկական ընկերութեան նախագահին, որ Մուշի անգլիական փոխ-հիւպատոսի դեկուցման համաձայն, յուլիսի 6-ից, գործերի վիճակը բաւական բարւոքվել է։ Թիւրքերը օգնութիւն են ցոյց տալիս կարօտեալ փախստականներին և վերին խոստացել է կանգնաւորել հայերի վրա յարձակվող յանցաւորներին։ Զարմանալի է, որ անգլիական պետական մարդիկ դեռ հաւատ են ընծայում Թիւրքական խոստումներին, այդ առիթով ֆրանսիական «Temps» լրագիրը հաղորդում է մի քանի տեղեկութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ գործերը այդքան էլ լաւ վիճակի մէջ չեն։ Անգլիական և ֆրանսիական հիւպատոսները հրաւիրել են Մուշից, առաջինը գնացել է Բիթլիս, երկրորդը Վան, ուսաի տեղական ժողովուրդը ճնացել է դարձեալ անպաշտպան։ (Новости)։

—Նորերս Անգլիայի Թագաւոր Էդուարդը մի գեղական ճառ արտասանեց, որի մէջ ասաց. «Պէտք է ասեմ, որ դժբաղդաբար Ռուսաստանի և Եապօնիայի մէջ շարունակվում են պատերազմական գործողութիւններ։ Պատերազմի սկզբում, ես հրատարակեցի մանիֆեստ, որի մէջ յայտնեցի ցանկութիւն խիստ չէզոքութիւն պահպանել և խորհուրդ տուի ամբողջ իմ ազգին ևս նոյնը անել։ Եւ սակայն ծագեցին լուրջ հարցեր. պատերազմող կողմերի դէպի չէզոք առևտրական նաւերը ունեցած վերաբերմունքի պատճառով, այդ վերաբերմունքի հետևանքն եղաւ այն, որ բրիտանական կայսրութեան առևտուրը շատ ծանր ճգնաժամ սկսեց կրել։ Թոյլ եմ տալիս ինձ յուսալ, որ գործը վերջ ի վերջոյ կը հարթվի խաղաղասիրաբար և մեր երկրի առևտրական շահերը չեն վնասվի։ Բրիտանական կառավարութիւնը մտադիր է հանդէս աջակցութիւն ցոյց տալ իր հպատակներին սրանց այն իրաւունքների իրագործման ժամանակ, որոնք ճանաչված են միջազգային օրէնքներով։ Ինչ վերաբերում է Մակեդոնիայի դէպքերին, արդէն ձեռնարկել են իրագործել մակեդոնական ժանդարմերիայի վերակազմութեան համար մշակված ծրագիրը և ներկայումս օտարազգի օֆիցէրները, որոնք նշանակված են պետութիւններից այդ նպատակով, արդէն աշխատում են իրանց յատկացած շրջաններում։ Նրանց աշխատութիւնները, գեներալ գը-Ջիօրջիս փաշայի գեկավարութեամբ, խոստանում են բաւարար հետևանքներ արտադրել»։ Գահակալ ճառի մէջ ոչինչ չէ ասված Թիւրքիայի գէպքերի մասին։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

### ՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

*8 օգոստոսի*

ԻՐԿՈՒՏՍԿ։ Հազորդակցութեան ճանապարհների մինիստր իշխան Միլիօվը այսօր անցաւ դէպի Բայկալ։

ՄԱՐԲԻՆ։ Դէպի Պետերբուրգ անցաւ Մեծ Իշխան Բօրիս Վլադիմիրովիչը։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ։ Տօնավաճառի առևտրականների Կուբօպատկինին ուղարկած հեռագրում սրտաբուխս ցանկութիւն է յայտնվում, որ ռուս բանակը նոր յաղթանակներ տանէ, դրա հետ միասին հաղորդվում է, որ վոխադրվում է 10,000 ր. հեռուոր արևելքում մարտնչողների կարիքների համար։

ՏՕԿԻՕ։ (Րէյտէր)։ Պաշտօնական հեռագիրը յայտնում է. «Ռուսներն ազատեցին Պօրտ-Արտուրի մօտ ընկղմված «Օսլաժիի» թնդանօթակիրի էկիպաժը։—Ծովապետ Կամիմուրան ասում է, որ Վլադիվոստոկի կրեյսերների հետ ունեցած կռւի ժամանակ ինքն այնպիսի շարժումներ է արել, որ աւելի իր մէջքի կողմում

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՄԲՅՏՕՎ։ Բարձրագոյն հրամանով ուղարկված Անբէպը՝ զննողան հիմնարկութիւնները քննելով՝ պատ. Սարատօվի սանիտարական դրութիւնը շատ վատ։ Անբէպն առաջարկեց մի շարք միջոցներ քաղաքի սանիտարական վիճակը բարեւաւելու համար։

ԴԱՐՄՇՏԱԴՏ։ Պրինց Լիւդվիգ Բատտէնբէրզը մեկնեց Պետերբուրգ իբրև անգլիական թագաւորի ներկայացուցիչ, որպէս զի ներկայ լինի Թագաժառանգ Ցեսարեվիչի մկրտութեանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ԱՃԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԼՍԱՐԴԵԱՆԻ**

*(Կուվիա, վօրօնցովի արձանի հանդէպ)*

Լմեն օր, բացի կիրակի օրերից՝

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Չիոմլէնի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Ֆ. ՈՒՏՍՈՒՆՑ—10—11 ժ. մորթու, վէներական և վիրաբուժ. ն։

Զ. Ի. ԲԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ—11—12 ժ. մանկաբարձութեան կանոնց և հղիների հ.

Կ. Ի. ՖՅԵԼԻՒՆ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹՐԻՒՆԵԼՈՒԹԻՒՆ—1—1½ ժ. ներքին և հիվանդ. հ.

Ա. Պ. ՖԱՐԱՊՏԵՏԵԱՆ—1—1½ ժ. նեյքին և հիվանդ. հ.

Ը. Գ. Սալօլով առաջնորդ. 9—11 ժ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ն. Ն. ԲՈԼՏՈՄՐԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վէներական հ.

Ֆ. Ս. ԼՕՎԻ—6—7 ժ. նեարդային (հիպնոտաբուժութիւն), ներքին և վէներական հ.

Կ. Ն-ՖԺԻՇԿ ՁԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Ֆ. Ա. ԹՈՐԽԱՆԵԵՑ—7½—8 ժ.

Վճարը 30 կ. չքաւորները ձրի։ Համախորդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ա. ԱՒՎԱՆԻՑԿԻ—տանը. ծաղկահաս և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցում ընդունվում են և պիչերօթիկ հիւանդները։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի. ԳՉԵԼԻԵՎ

Ր Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

**Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ**

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (Ս.տ.) 11—100

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

**Դր. Տէր-Գրիգորեանց**

ընդունում է հիւանդներին—ներքին (ժամանաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններ. ունի բնակէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրօսպէկտ, տէլէֆօն 825.
(Շ. Ա. Տ. Չ.) 71—105

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի
Ա. ՂԱՐԻԲԵԱՆՑԻ

**ՄՈՄՈՒՈ**

Բանաստեղծական փնջիկը. գինն է 40 կոպէկ։
Դիմել, առաջին հեղինակին՝ Кизляръ т/обл. Арташесу Гарибяну. 5—5

**Հիւ-Նախիջեւանում**

օպտտոմի 20-ից բացվում է գրավաճառանոց Աբրամ Պօղոսեանցի, որտեղ վաճառվելու են դասական և ընթերցանութեան կըրքեր ռուսաց և հայոց լեզուներով, դպրոցական դիւանական և ամեն տեսակ պիտոյքներ։
(Շ. Չ.) 9—10

**ՎԱՌՆԱՅԻ** ազգային երկու նախակրթարանների համար հարկաւոր է ձայնաւոր երաժշտագէտ մի ուսուցիչ։ Ամսավճարը 100 ֆրանկ։ Յանկացողները մանրամասնութիւնների համար պէտք է դիմեն տեսչութեան։

Հայեակ Խուշպուլեան
Վառնա (Բօլգարիա) (Շ. Չ.) 2—2

**Կենտրօնական**

գրավաճառանոցումը, Թիֆլիս, վաճառվում են հետևեալ հաղուագիւտ հրատարակութիւնները.

«Փորձ» գրական հանդէսի բոլոր 4½ շրջանները 30 ր., առանձին ա. տ. 15 ր., հետևեալ 3½ տ.—15 ր.։

«Կռունկ» 4 տարվա 7 ր., զանազան տարիների առանձին հատորներ 1 ր. 50 կ.։

«Արձագանք» զանազան ամբողջ տարիներ։
(Շ.) 7—10

**Պանսիօն եւ Ռուսուվնարան**

ՎԻԼԼԻՄՄԻ

Ընդունվում են պիչերօթիկ և երեխաներ պետական կրթական հիմնարկութիւնների համար պատրաստելու. առանձնապէս՝ —ֆրանսերէն և գերմաներէն լեզուներից։

Александрополь, рядомъ съ городскимъ садомъ. (Ե. Հ. Չ.) 1—10

**ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ**

գրավաճառանոցում վաճառվում են.

| | | |
|---|---|---|
| «Հայ աշուղներ», Ալվերդեանի. | | 1—50 |
| «Սայեաթ-Նովա», Ալվերդեանի. | | — 50 |
| «Առակն. Մօլլա Նասր-էդ-Դինի և Հորոսի | | — 30 |
| «Զբաւնու քնարը», երկու հատոր | | 1 — |
| «Թրատա Դաւիթ», Աբեղեանի | | — 30 |
| «Ուսեալ պանդուխտ», Ամիրջանեանի. | | — 15 |
| «Բարոյական առակներ», Բարխուդար. | | — 20 |
| «Առիւծաձև Մհեր», Բալասանեանի | | — 25 |
| «Մոքոս», ժողովրդակ. վէպ, Հայկունի | | — 25 |
| «Բարակ շահ և անուշ շահ», » | | — 10 |
| «Թագաւոր Լուսիկ» » | | — 25 |
| «Ռասամ և Սալման», Բալասանեանի | | — 25 |
| «Աշուղ Ազատի հէքեաթը», Մաթևոսեանի | | — 40 |
| «Շահզադէ և Փէրի-խանում», Ա. Փ. | | — 30 |
| «Դանար Մերվի և «Զօհրաբ» խանումի հէքեաթը, Ագ. Մխիթարեանի | | — 30 |
| «Սասունցի Դաւիթ», Ճաղարբէգեանի | | — 20 |
| «Հայ ժողովրդական հէքեաթներ», Տ. Նատասարգիանի, 3 հատոր | | 1 50 |
| «Բոռոդլի հէքեաթը», հրկու հատոր | | — 70 |
| «Բաբամի և Աալիի հէքեաթը», Աշղ-Ջիւան. | | 40 |
| «Աշղ-Դարիբի հէքեաթը», » | | — 30 |
| «Շահ-Իսմայիլի հէքեաթը», » | | — 30 |
| «Մէլիք Շահի հէքեաթը. » | | — 30 |

Դիմել՝ Книжный магазинъ "Гуттенбергъ" (Дворцовая), Г. Галустяну. 1—2

**ՎԱՌՎԱՌԻԿ ԵՒ ՍՏԵՓԱՆ ՍՄԲԱՏԵԱՆՑՆԵՐԻ**

ուսումնարաններում ասանվում ևն՝ կրօն (հայոց լեզուով), ռուսաց լեզու, թուաբանութիւն, հայոց լեզու և գեղագրութիւն և տարվայ ընթացքում պատրաստվում են քննութեան երեխաներ զանազան միջնակարգ դպրոցների և լազարեան ճեմարանի համար։

Ուսումն սկսվում է օգոստոսի 10-ից։ Րօստով Դ/վ, Տուրգենեվսկաեա փողոց, տուն եղբ. Ոսկանօֆների, № 4. (ա. օ) 6—25

**ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ**

Յատկապէս պատրաստած պետական դպրոցների համար, (Թոյլատրված հողևոր և ուսումնարանական վարչութիւններից) աշխատասիրութիւն Եղնիկ ատաք քահ. Երզնկեանի։

I. Առաջին գրոյկ, պատրաստական դասարանների համար «Գլխաւոր ազօթքները (իրանց բացատրութիւններով) և տօների համառօտ պատմութիւնները» 5 րդ տպ. գինն է 20 կոպէկ։

II. Երկրորդ գրոյկ, «Հին-ուխտ» (30 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) 3-րդ տպ. գինն է 30 կոպէկ։

III. Երրորդ գրոյկ, «Նոր-ուխտ» (32 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) գինն է 30 կոպէկ։

Գրավաճառների, ուսուցիչների համար 20% զեղջում, առանց ճանապարհածախքի։ Դիմել Тифлисъ, прот. Езнику Ерэинкянцъ կամ Тифлисъ, Центральный книжный магазинъ.
(Ե. Հ. Չ.) 5—25

**ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐ**

Ուսակերաց համար

| | | | Ր. | Կ. | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Դասատետր կրօնի | I տարի | — | 25 | 25% զ. |
| 2. | » | » II » | — | 20 | |
| 3. | » | » III » | — | 30 | |
| 4. | Հին-ուխտ (ընդարձակ) | | — | 45 | 20% զեղչ |
| 5. | » (համառօտ) | | — | 35 | |
| 6. | Նոր-ուխտ | | — | 40 | |
| 7. | Գործք առաքելոց | | — | 40 | |

Ուսուցչաց համար

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի | 1 | 75 | 35% զեղչ |
| 9. | Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի | 2 | 5 | |
| 10. | Ուսուցման բրևտոնական կրօնի Դ. | 1 | 50 | |
| 11. | Ուսուցման բրևտոնական կրօնի Ե. | — | 50 | |

Յանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.

1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Коммерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».

Դասագրքերին պահեստը ամառս գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրագեանցի մօտ (Карвансарай Тамамшева мануфактурный магазинъ А. Амирагова).

Յանկացողները նրանից ևս կարող են պահանջ անել։

Սահակ քահ. Սահակեանց
յ. ա. օ. յ.—օ. օր-մէջ ա. ա. օ. 39—66

**Հարկաւոր է** մի հայ վարժուհի, որ պարապէ 6 աղջիկ 1, տղայի հետ։ Պայմանների համար կարող են դիմել՝ Станція Абинская (Куб. обл.) Аветису Затикяну. (Կ. Ե. Հ.) 2—4

Лучшее косметическое средство,
дѣлающее лицо свѣжимъ и чистымъ
Источникъ красоты.




Патент. въ Англіи.

Кремъ КАЗИМИ

**Метаморфоза**

противъ ВЕСНУШЕКЪ.

Доказательствомъ подлинности средства противъ веснушекъ служитъ подпись Kazimi и приложенный при каждой банкѣ рисунокъ „ИСТОЧНИКЪ КРАСОТЫ". Безъ подписи Kazimi и рисунка, утвержденнаго Департаментомъ Торгов. и мануфактур. за № 4533—

ПОДДѢЛКА.

продается во всѣхъ аптекарск. парфюм. магаз. и аптекахъ.

«Գեղեցկության աղբիւր» 3-11. 20, 29, ա. ո

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ**

լոյս տեսած աշխատասիրութիւնները.

1. «Խորտակված սէր» (վէպիկ) գինը . 30 կ.
2. «Գրքացի սարուկներ» (պատ.) (սակ.) 5 »
3. «Կեանքի բօժանից (վէպիկ) . . . 25 »
4. «Էմիլ Զօլա» (փոքրիկ տես.) (սակ.) 5 »
5. «Լօխմանի հէքիմը» (պատկեր) . . 8 »
6. «Րաֆֆի» (համ. տեսութիւն) (սակ.) 10 »
7. «Կեանքի խորշերից» (պատկերներ) 20 »
8. «Առաջին ժուրգականութիւնը» (պատ.) 8 »
9. «Արբեցողի վատիկը (պատկեր) . . 3 »
10. «Ծննդեան նշանդրէքը» . . . . . 15 »

Գրքերի պահեստը—Թիֆլիս—«Գուտտենբէրգ» գրավաճառանոցում։ Հեղինակին դիմողները կունենան մեծ զիջում։ Առանց կարեվճարի չէ դիմել։ Հասցէն Թիֆլիս, Հալաբար, Լազարեվսկայա, № 49, տուն Մուրադովի։ 2—2

Լոյս տեսաւ

**ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ**

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հատոր առաջին. 1865—1871.

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ.

Առաջին հատորի մէջ զետեղված են այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թուականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում։

Դիմել «Գուտտենբէրգ» գրախանութը։ 13—25

Ֆիզանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

# ՀԱՂՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

**ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ**

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։
Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագիր ամեռավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համրիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Րէմինկտօնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հասատատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1904 թ. սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն ճաշիկ յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն,ատեստատներ։

Դրանից անկախ, 1904 թ. սեպտեմբերի 1-ից կը բացվեն քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Յանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (Կ. Հ.) 12—25

# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ „ՍՏՈՒԿԵՆ ԵՒ ՔՆԿ."

**ԲԱԳՈՒ**

Իր սեփական պահեստներում մշտապէս ունի

երկաթ ամեն տեսակի և ձևի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкованное) երկկոպանի երկաթէ գերաններ, ջրհան մեքենաներ «Կամերոն» և «Փուպլէքս», ռուսական գազային խողովակներ և դրանց զօդաւորող մասեր, ֆիտինգսներ և այլն։ Դուբգեր զանազան տեսակի (станки токарные, сверлильные, строгальные и др.)։ Մամուլներ ծակող և ուրիշ տեսակներ։ Գողպատ՝ գուբեր, կարոցներ և գործիքներ չինելու համար։ Մեռադեայ փական, աղլուս անհոլ (согнеупорный), «Գլէնդոյզ» և կաւ, բևեռներ (заклепки котельные, пистонные)։ Դամիր զանազան տեսակի, պտուտակներ (болты) և գայկաներ, պղինձ թերթաւոր և կտորներով, պղնձէ խողովակներ, թուղթ ասֆալտաված (асфалтированный) խողովակներ ջրուղիների համար և դրանց զօդաւորող մասեր, ենագ ձօղաւոր, արճիճ թերթաւոր և կտորներով, զինկ թերթաւոր և այլն։ Պարագաներ (арматура) և լուձայ։ բրօնզեայ և ձուլածոյ։ Գործիքներ զանազան տեսակի, բետինէ առարկաներ, ցեմենտ. նմանապէս տեխնիքական ամեն տեսակի մետաղներ և իրեր։

Ներկայացուցիչ է

ՐՈՒՍՏՈՆ ՊՐՕԿՏՈՐ և ԸՆԿ.

Շոգեմեքենաներ
Կերօսինեայ, Նաւթեայ } շարժիչ մեքենաներ
Շոգեատարներ (локомобилы)
Ասդուկներ (катки для шоссе)

ՐԻՒՔԱՐԴ ՄԱՅԵՐ

Ներկեր զանազան տեսակի
Արճիճեայ ճերմկուց (бѣлила)
Արճիճեայ սուրբ (сурикъ)

**ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՆՆԵՍՄԱՆԵԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ**

*Միակ ներկայացուցիչը*

Խողովակներ առանց կարի, գազեայ, նաւթահորերի, ծխնելուղի և ջրաշէնական։ Նմանապէս և ամրակուռ խողովակներ լատացուցիչների համար (компрессоръ)։

Կայմեր (мачты) անկար խողովակներից, էլեքտրական ուղիների լուսաւորութեան և այլ շինուածքների համար սիներ հեռախօսական, հեռագրական լարերի և չանթարգելների համար։

Ներկայացուցիչ է նմանապէս «Գանակէ» «Էմիլ Լիլ գարա և ընկ.» և ուրիշ ընկերութիւնների ու հատատուութիւնների։

Ընդունում է լիովին կառուցումն տախտակի, բուրդ լուանող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիքական պիտոյքների վերաբերեալ։

Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս։

Ըրժէքների ցուցակները ուղարկվում են ձրիաբար։ (Կ. 1 տն.)

Дозволено цензурою. Тифлисъ, 9-го августа 1904 г. Ցարաւ «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 15.